ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՆՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»
ծրագրի շրջանակներում

ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտությունն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 6

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7

«ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ 16

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ 18

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻՆ 19

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻՆ 20

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ԶԼՄ-ների եւ քաղաքացիական հասարակության դերը Հայաստանի նոր բնակիչների ինտեգրման գործում» ծրագրի նպատակն է պարզել, թե Արցախյան 44-օրյա պատերազմի (2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր) արդյունքում Լեռնային Ղարաբաղից (ԼՂ) Հայաստանի Հանրապետություն (ՀՀ) մոտ քսան հազար բռնի տեղահանված հայերն ինչ խնդիրներ ունեն: Ինչով կարող են զանգվածային լրատվամիջոցները եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նպաստել բռնագաղթած արցախցիների խնդիրների լուծմանը, նրանց ինտեգրմանը հայաստանյան կյանքին: Պատրաստել ՀՀ կառավարությանը, քաղհասարակությանը եւ լրատվամիջոցներին ներկայացվող առաջարկությունների փաթեթ:

Արցախցի հազարավոր տեղահանվածների ինտեգրումը հայաստանյան կյանքին բարդ խնդիր է՝ պայմանավորված Արցախի քաղաքական կարգավիճակի տասնամյակներ ձգվող անորոշությամբ, ընտանիքների անջատվածությամբ, բնակարանային եւ սոցիալական բազմաթիվ այլ չլուծվող խնդիրներով, ինչպես նաեւ կառավարության համապատասխան քաղաքականության թերություններով:

Առկա մարտահրավերների այս համատեքստում Հայաստանի նոր բնակիչների ինտեգրման ուղղությամբ պատշաճ աշխատանք չկատարելը կարող է խնդիրներ առաջացնել ինչպես Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ բռնագաղթած արցախցիների համար:

Լեռնային Ղարաբաղի հայերի մեծ մասը հաստատվել է Հայաստանի հեռավոր շրջաններում, որտեղ տեղեկատվության փոխանակումը բավականաչափ ծավալուն չէ, ինչը եւս մեկ լուրջ խոչընդոտ է նոր բնակիչների ինտեգրման համար:

Հետազոտողները խնդիր են դրել՝

- բացահայտել 44-օրյա պատերազմի արդյունքնում Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնագաղթած հայերի համար տեղեկատվության աղբյուրների հասանելիությունն ու մատչելիությունը,
- պարզել այս թիրախային խմբի հիմնական խնդիրները, նրանց կեցության պայմանները ՀՀ-ում,
- հասկանալ, թե որքանով են ԼՂ եւ ՀՀ կառավարությունների կողմից իրականացվող ծրագրերն արտացոլում տեղահանված ու բռնագաղթած արցախցիների կարիքները եւ արդյո՞ք վերջիններս բավարարված են դրանցով,
- պարզել, թե տեղահանված արցախցիներն ինչ կարծիքի են հայաստանյան մամուլում իրենց խնդիրների լուսաբանման մասին, բավարարվա՞ծ են, արդյոք, դրանցով,
- իմանալ, թե իրենց առնչվող որ խնդիրներին պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն ԶԼՄ-ները,
- իմանալ, թե որն է Լեռնային Ղարաբաղի ապագայի տեսլականը՝ տեղահանված արցախցիների աչքերով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության (ԱՀ) դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի հետեւանքով բազմաթիվ արցախցիներ ստիպված էին լքել իրենց տները՝ անվտանգության ուղիղ սպառնալիքի ներքո:

ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի տվյալներով՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարբեր մարզերում ժամանակավորապես ապաստանած, բռնի տեղահանված ԱՀ քաղաքացիների թիվը կազմում է շուրջ 20500 մարդ՝ 5300 ընտանիք (2022 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է շուրջ 21000 մարդ՝ 5400 ընտանիք):

Նշված թվաքանակի շուրջ 26%-ն ապրում է Երեւան քաղաքում: Համեմատաբար խոշոր համայնքներ են ձեւավորվել Արարատի, Սյունիքի, Կոտայքի եւ Արմավիրի եւ Գեղարքունիքի մարզերում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղահանված արցախցիների աջակցության միջոցառումներ է նախաձեռնել, որոնք իրականացվել են ՀՀ-ում Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի հետ սերտ համագործակցությամբ, ՀՀ ՏԻՄ-երի, ՔՀԿ-ների, բարեգործական նախաձեռնությունների, միջազգային մարդասիրական կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ:

Ամենամասշտաբային ծրագրերից են եղել

- Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը,
- Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառումը,
- Պատերազմական գործողությունների հետեւանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին եւ հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման ծրագիրը,
- Արցախի Հանրապետությունում հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը պատերազմի պատճառած ավերածությունների հետեւանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառումը:

Բնակարանի ձեռք բերման հավաստագրեր

2022 թվականի հուլիսի 1-ից ՀՀ կառավարության կողմից ԱՀ առանձին շրջաններից տեղահանված քաղաքացիների համար գործարկվել է հիփոթեքային եղանակով՝ պետական աջակցությամբ տրվող հավաստագրերի միջոցով ՀՀ-ում բնակարաններ ձեռք բերելու ծրագիր:

2023թ. մարտի 1-ի դրությամբ՝ ծրագրի շրջանակում հավաստագիր է ստացել 3423 շահառու, որից շուրջ 300 շահառու ձեռք է բերել անշարժ գույք կամ հիփոթեքային վարկավորման գործընթացը գտնվում է ավարտական փուլում:

ԱՀ կառավարության հաստատված ծրագրով պետական աջակցությամբ համապատասխան հավաստագրերի միջոցով ՀՀ-ում բնակարան կարող են ձեռք բերել զոհված եւ անհայտ կորած զինծառայողների իրավահաջորդները (զոհը ՀՀ-ում հուղարկավորված եւ ընտանիքը տեղահանված լինելու պարագայում): 2022 թվականի ընթացքում այդպիսի հավաստագրեր են ստացել 74 ընտանիքներ, որից 19-ն արդեն ավարտել է բնակարանի ձեռքբերման գործընթացը:

Հաջորդ ծրագիրը վերաբերում է հավաստագրի միջոցով արդեն ձեռք բերված բնակարանի կահավորմանը: Նշված հավաստագրերից ստացել է ընդամենը 2 ընտանիք. այն առայժմ ՀՀ տարածքում հնարավոր չի եղել իրականացնել՝ մասնավոր հատվածի եւ համապատասխան պետական կառույցի միջեւ համագործակցության բացակայության պատճառով:

Աջակցության ծրագրերի ամբողջական ցանկը հասանելի է ՀՀ կառավարության պաշտոնական կայքում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հետազոտության այս փուլում՝ 2023 թ. մարտ-ապրիլ ամիսներին, իրականացվել են հարցումներ մայրաքաղաք Երեւանում, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքում, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում եւ մոտակա գյուղերում ապրող տեղահանված 30 արցախցիների շրջանում: Հարցվածների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

Արմավիրի մարզի Մեծամոր եւ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքներում հանդիպումներն իրականացվել են **Արմավիրի զարգացման կենտրոնի** եւ **Մարտունու կանանց համայնքային խորհրդի** հետ համագործակցությամբ: Այս հասարակական կազմակերպություններն ակտիվորեն ներգրավված են իրենց մարզերում ապրող տեղահանված արցախցիների աջակցության միջոցառումներում:

Հարցումներն իրակացրել են ԵՄԱ փորձագետները՝ նախապես մշակված հարցաթերթիկի կիրառմամբ: Հարցերն առնչվում են ինչպես տեղահանվածների սոցիալական, առողջապահական եւ բնակարանային խնդիրներին, այնպես էլ իրավական կարգավիճակին:

Առանձին հարցով խնդիր է դրվել պարզելու, թե իրենց կարծիքով որքանով են հայաստանյան լրատվամիջոցները լուսաբանում տեղահանված արցախցիների խնդիրները, որ հարցերն են, որ դուրս են մնում լրատվամիջոցների ուշադրությունից:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցմանը մասնակցել են **30** տեղահանված արցախցիներ, որոնցից

- 17-ը եղել են 55 եւ ավելի բարձր տարիքի,
- 8 -ը՝ 30-55 տարեկան,
- 5 -ը՝ մինչեւ 30 տարեկան:

Հարցման մասնակիցել է **5 տղամարդ եւ 25 կին:**

Հարցմանը մասնակցածներից **7-ը ունեն բարձրագույն կրթություն, 22-ը՝ միջնակարգ եւ միջնակարգ-մասնագիտական, 2-ը՝ ութամյա**:

Տեղահանվածները եղել են **Շուշի, Հադրութ, Քարվաճառ եւ Բերձոր քաղաքներից, Հադրութի շրջանի Տող, Մոխրենես, Մեծ Թաղլար, Մարտակերտի շրջանի Նոր Այգեստան, Չլդրան, Հովտաշեն, Գետավան, Հայկաջուր, Ասկերանի շրջանի Աղնուխ, Ուխտասար, Քաշաթաղի շրջանի Գանձա, Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ, Նոր Վերիշեն եւ Քնարավան գյուղերից**:

Հարցվածներից 20-ը Հայաստան են տեղափոխվել պատերազմի հենց առաջին օրերին՝ սեպտեմբերի 27-30-ին, 8 հոգի հոկտեմբերին է տեղափոխվել, 2-ը՝ նոյեմբերին:

Տեղահանվածների **բնակարանային հարցը** տարբեր կերպ է լուծված:

12-ը բնակվում են պետական միջոցներով վարձակալած տներում, 15-ը՝ իրենց կողմից վարձակալած տներում: 3-ը ապրում են բարեկամի տանը, միայն կոմունալներն են իրենք վճարում:

Հարցմանը մասնակցածների **ընտանիքների կազմի** տվյալներն այսպիսին են.

- 1-4 հոգուց բաղկացած ընտանիքներ -16,
- 5-8 հոգուց բաղկացած ընտանիքներ -14:

Բնակության նոր վայրում **աշխատանք ունեն հարցվածներից միայն 4 հոգի**:

Աշխատանք չունեցողները 26-ն են:

«Շատ լավ մասնագետներ կան, որ այստեղ գործ չեն գտնում:
Արցախում իրենք քաշ ունեին, իսկ այստեղ ճնշված են»:

Կենսաթոշակ/նպաստ ստացողները՝ 13, չստացողները՝ 17:

Հարցման մասնակիցներից 20-ի ընտանիքներում կան անչափահասներ:

Երեխաների մանկապարտեզ-դպրոց հաճախելու հարցը հիմնականում լուծված է: Բայց մի շարք բնակավայրերում մանկապարտեզի խնդիրներ կան:

«Վաղաշենում մանկապարտեզը չի գործում»:
«Մեծամորում մանկապարտեզը փակվեց»:
«3 տարեկան հաշմանդամ երեխա ունեմ, մանկապարտեզ չեն ընդունում (Մարտունի):

«Ունեք, արդյո՞ք, առողջապահական խնդիրներ» հարցին 30-ից միայն 6-հոգի է բացասական պատասխան տվել: Առողջական խնդիրներ ունեցողներից երկուսը նշել են, որ պոլիկլինիկայում գրանցված չեն, եւս երկուսը հատուկ նշել են, որ գումար չունեն բուժման՝ վիրահատության համար:

Բոլոր հարցվածները Արցախի Հանրապետության քաղաքացիություն ունեն:

«ՀՀ անձնագիր է, բայց Հայաստանի քաղաքացիություն չունենք:
Փախստականի կարգավիճակ չեն տալիս: Այդ հարցը ինչպես նախկինում,
այնպես էլ հիմա փակել են եւ թույլ չեն տալիս, որ խնդիրը լուսաբանվի»:

«Իրավական ի՞նչ կարգավիճակ եք ցանկանում ձեռք բերել» հարցին

- 8 հոգի պատասխանել է՝ փախստականի կարգավիճակ:

«Որպեսզի մեր իրավունքները պաշտպանելու հնարավորություն ունենանք»:
«ՄԱԿ-ում ադրբեջանցի փախստականների 600,000 գործ կա, իսկ հայերի՝ ընդամենը 25»:
«Մենք ուզում ենք փախստականի կարգավիճակ, որ դուրս գանք՝ պետությունը դուրս գա միջազգային հարթակ: Դա քաղաքական խնդիր է Ադրբեջանի դեմ»:

- 8 հոգի - ԱՀ քաղաքացիությունը չի ցանկանում փոխել:
- 13 հոգի - ցանկություն ունի դառնալ ՀՀ քաղաքացի:
- 1 հոգի - դժվարացել է պատասխանել:

«Որքանո՞վ եք ինտեգրված համայնքային կյանքին, որտեղ բնակվում եք» հարցին

- 3 հոգի պատասխանել է՝ վատ, ընդգծելով՝ «սա մեր տունը չէ»:
- 27-ը նշել է, որ լավ է ինտեգրված:

«Ընտիր ժողովուրդ են»:
«Սովորական շփվում ենք»:
«Ուսանողական տարիներս այդտեղ են անցկացրել, ընկերներ ունեմ,
ինտեգրման խնդիր չի էլ եղել»:
«8 տարի Երեւանում սովորել եմ, ես խնդիր չունեմ, բայց տղաս չհարմարվեց,
վերադարձավ Արցախ: Իրեն ասել էին՝ դուք թուրք եք…»:

«ՀՀ ՏԻՄ-երը (համայնքապետարան, մարզպետարան) որքանո՞վ են ուշադիր Ձեր կարիքներին» հարցին

- 8 հոգի պատասխանել է՝ ուշադիր են:

«Եթե հարցեր լինում են, բարեհամբույր են»
«ՏԻՄ-երը սկզբում հաշվառում էին, օգնություններ բաժանում»:
«Ինչ հարցով դիմել եմ՝ օգնել են, «չէ» բառը չեմ լսել»:

7 հոգի պատասխանել է՝ ուշադիր չեն:

«44-օրյա պատերազմից հետո առաջին տարին
իրենցով հետաքրքրվում էին, իսկ հիմա իրենց հոգսերով հետաքրքրվող չկա»:
«Սկզբում ուշադիր էին թաղապետարանները, բայց արդեն 1 տարի է՝ ոչ:

- 15 հոգի դժվարացել է պատասխանել այս հարցին:

«ՀՀ-ում վերաբնակեցված արցախցիներին ցուցաբերվող աջակցության ինչ ծրագրերից եք տեղյակ» հարցի պատասխանները հետեւյալն են.

- 17 –ը նշել է, որ տեղյակ է արցախցիների աջակցության ծրագրերից։

«Գործում է Արցախի տեղեկատվական շտաբը, իրենք են օգնում, տեղեկացնում»։
«Քանի որ ինքս էլ կամավոր աշխատել եմ կառավարության օպերատիվ շտաբում, տեղյակ եմ ամեն ինչից, ժամանակին բավական շատ ծրագրեր կային, վիրավորերի, զոհվածների ընտանիքների համար…այս պահին Կարմիր խաչն է զանգում հետաքրքրվում, տեղահանության գրանցումներ են անում, կարիքներն են գնահատում…
«Սկզբում ԲՀՀ-ից իրավաբան, հոգեբան աշխատել են մեզ հետ։ Հաղորդիչները համախմբված են, միմյանց հետ շփումներում մեկը մյուսից շատ բան է իմանում»։

- 13-ը նշել են, որ տեղյակ չեն կամ լավ տեղյակ չեն աջակցության ծրագրերից։

«Որքանով են այդ ծրագրերն արտացոլում Ձեր կարիքները» հարցին

- 1 մարդ է պատասխանել՝ «լավ», հավելելով՝ «քանի որ ամեն ինչ Հիսուսի մեջ է»։ Նա նաեւ գոհ է այդ ծրագրերի իրականացման որակից։
- 29 հարցվածները կամ չեն ցանկացել, կամ դժվարացել են պատասխանել տվյալ հարցին։ Կամ պարզապես պատասխանել են, որ գոհ չեն ոչ՛ ծրագրերից, ոչ դրանց իրականացման որակից։

«Միայն գումար ենք ստանում»։
«Հեռանկարային ծրագրեր չեն։ Աշխատանքի հարց չեն լուծում, թոշակի հարց չեն լուծում, մի մասնագիտություն եթե մեկին սովորեցնում են, գործի տեղ միեւնույն է չկա…»։
«Այդ ծրագրերը համակարգված չեն, պետություն-մասնավոր օգնությունները համակարգված չեն, մեկ ընտանիք կարող է 10 տեղից օգտվել, մյուսները դուրս մնան…»։
«Ոչ, բավարարված չենք։ Մասնակի աջակցություն է 40.000 դրամը, որ ստանում ենք, կացարանի ծախսերը հոգում..»։.
«Արցախցիներին աշխատանքի են ընդունում չնչին աշխատավարձով. մարդը կարող է 15 ժամ սուպերմարկետում աշխատի, ամսական 40,000 դրամ ստանա, վիրավորական է»։
«Քարվաճառի մեր տունը փաստաթուղթ չուներ, գրանցված չէր։ Հիմա ասում են՝ դուք տուն չեք ունեցել, սերտիֆիկատ չի հասնում։ Իրավաբանական հարց ունեմ չգիտեմ ում դիմեմ»։
«Բավարար չէ, անգամ գազի-լույսի փողին չի հերիքում»։
«Ինձ ոչ մի բանով չեն օգնում։ Բազմազավակներին օգնում են, բայց ես ոչ մի կատեգորիայի մեջ չեմ մտնում»։
«Կարմիր խաչն է օգնում, Արմավիրի զարգացման կենտրոնը, բայց դա չի բավարարում էլի…»։
«Հաշմանդամ երեխա ունեմ, հիվանդանոցի հետ կապված ոչ մի հարց չի լուծվում»։
«Բանկերը փող չեն տալիս, ասում են՝ վճարունակ չեք..»։.
«Մեզ չեն աջակցում, բայց հեսա 4 տղաներիս կգան կտանեն բանակ»։

Սույն հետազոտության շրջանակներում առարկայական հանդիսացող հաջորդ հարցին՝ **«Որքանով են հայաստանյան լրատվամիջոցները լուսաբանում տեղահանված արցախցիների խնդիրները»**,

- միայն մեկ մարդ է պատասխանել՝ «լավ», եւ դա ամեն ինչ Հիսուսով պայմանավորող մարդն է։
- Մյուս բոլոր հարցվածները «վատ» են գնահատել լուսաբանման որակը։

«Ես չեմ հավատում լուրերին»։
«Ինչ որ խոսում են՝ չի արտացոլում մեր խնդիրները»։
«Սկզբում սաղ սուտ էր, հիմա ոչինչ չեն գրում»։
«Մեկանգամյա օգնությունների մասին գրելով տպավորություն են ստեղծում, թե արցախցիներին աջակցում են, բայց մեկանգամյա օգնությունն ինչ է տալիս…»,
«Առաջ ինչ-որ բան ասում էին, հիմա միայն Լաչինից են խոսում, ամեն ինչի մասին մոռացել են»։
«Միայն Հ2-ն էր ճիշտն ասում, էն էլ հիմա փակեցին»։
«Երբ ցույցեր, միտինգներ ենք անում, գալիս են, լուսաբանում են։ Մեր քաղաքական հայտարարությունները նախկինում հրապարակում էին, հիմա աշխատում են չհրապարակել, հակաիշխանական խոսքերը չտարածել…»։
«Պատահական մի բան լսում են՝ դրա մասին գրում»։

Արցախի քաղաքացիական հասարակության մի ակտիվ ներկայացուցիչ նշել է իրենց խնդիրներին ակտիվորեն անդրադարձող ԶԼՄ-ների անուններ, որոնց շարքում՝ «Հետք», «Սիվիլնեթ», «Ա1+», «Ալիք Մեդիա», «Ֆակտոր TV», «168 ժամ»:

Ահա **«Ձեր կարծիքով՝ տեղահանված արցախցիների ո՞ր խնդիրներին պետք է ավելի շատ անդրադառնան լրատվամիջոցները»** հարցին տրված պատասխաններից մի քանիսը:

«Ինչ-որ չափով լուսաբանվում է, բայց համապարփակ վերլուծություն չկա ոչ մի տեղ:
Չկա ծրագիր, որտեղ բոլոր խնդիրները լուսաբանվում են»:
«Երբ միտինգ, ակցիա ենք անում՝ գալիս լուսաբանում են:
Սովորական կյանքում առկա մեր հարցերը՝ ոչ:
«Հ1-ը լրոգված է ասում, ընդդիմադիրներն էլ ծայրահեղ վատն են ներկայացնում»:
«Օդից կախված արցախցիների մասին ոչ ոք չի գրում:
Թող իրական պատմությունը գրեն, ոչ թե կիսատ-պռատ»:
«Մեր կարգավիճակին ոչ ոք չի անդրադառնում, թող դրա մասին գրեն»:
«Արցախի ապագայի, մեր տների մասին թող գրեն:
Հեռավոր մարզերում տեղավորված արցախցիների խնդիրներն անտեսված են»:
«Օգնությունների բաշխման հարցում անարդարությունների մասին թող գրեն»:
«Բանկերը վարկեր չեն տալիս արցախցիներին»:
«Ամենակարեւորը կացարանի հարցն է, բնակվարձերը բավական բարձր են…
աշխատանքի տեղավորման հարցը…, 45-50-ից բարձրները,
որ դեռ թոշակ չեն ստանում, բայց աշխատանք էլ չունեն»:
«Այն մասին, որ բնակարանի սերտիֆիկատները թակարդ են:
Թող ոչ թե սերտիֆիկատ տան, այլ տուն սարքեն: 10 միլիոնով ոչ մի տեղ տուն չես առնի»:
«Թող մի ժուռնալիստ տան սերտիֆիկատ ստացած մի արցախցու
հետ գնա սկզբից մինչեւ վերջ՝ տեսնի ինչ խոչընդոտներ կան, հնարավոր է, թե՞ հնարավոր չէ
10 միլիոն դրամով տան հարցը լուծել, կահավորել ու նորոգել…»:
«Քաղաքական կարգավիճակի խնդիրն է ամենակարեւորը:
Ես ասել եմ՝ եթե Հաղրութով չզբաղվենք, վաղը Երեւանն է դառնալու Հաղրութ»:
«Իրավաքաղաքական հարցեր է պետք բարձրացնել. ով ենք մենք, արցախցին ով է,
ինչ է Արցախը Հայաստանի համար: Ճանապարհը բացվի՝ բոլորը դուրս են գալու…»:

«Արդյո՞ք ցանկանում եք վերադառնալ Արցախի Ձեր բնակավայրը կամ ԱՀ այլ բնակավայր» հարցին

- «Այո» է պատասխանել 5 հոգի:
- «Ոչ» է պատասխանել 14-հոգի:

«Միլիոն էլ տան՝ չեմ գնա, վախենում եմ…»:

- Հարցվածներից 11-ը նշել է, որ եթե վերադարձվեն Արցախի օկուպացված տարածքները, եթե Արցախը կարգավիճակ ունենա եւ անվտանգ լինի, միայն այդ դեպքում կցանկանան վերադառնալ Արցախ:

«Ես կուզեմ Հաղրութ վերադառնալ, Ստեփանակերտ՝ ոչ:
Եթե կարգավիճակի հարց չլուծվի, Արցախում հայ չի մնա:
Երեւանում էլ հայ չի մնա, եթե Արցախի հարցը չլուծվի:
Նիկոլի ասած 29,000 քառ.մետրը բավարար արիալ չէ հայ ժողովրդի զարգացման համար»:
«Հաղրութ եմ ուզում, որը չկա»:
«Եթե Արցախը հայկական լինի»:
«Եթե Քարվաճառը տան»:
«Եթե մեր տարածքները հետ վերցնենք»:

«Հնարավոր համարո՞ւմ եք հաշտություն Ադրբեջանի հետ» հարցին

- միայն 1 մարդ է պատասխանել «Այո»։
- 2 մարդ դժվարացել են պատասխանել։
- Մնացած 27-ը «ոչ» պատասխանն են տվել։

«Ադրբեջանը տեռորիստական, ֆաշիստական երկիր է, ինչպես կարող ենք դրա հետ հաշտվել։
Չնայած, որոշ հայեր Ստոկհոլմյան սինդրոմ ունեն»։

«Ինչպես պետք է կարգավորվի Արցախյան խնդիրը» հարցին

- 18 հոգի պատասխանել է՝ Արցախը կարող է լինել անկախ պետություն։

Արցախը պիտի անկախություն ստանա միջազգային իրավունքով։
100,000-ից ավելի բնակչությունը ունի ինքնորոշման իրավունք։

- 9 հոգի պատասխանել է՝ Արցախը կարող է լինել ՀՀ կազմում։
- 2 հոգի պատասխանել է՝ Արցախը կարող է լինել մեծ տերության՝ Ռուսաստանի կամ Ֆրանսիայի կազմում։
- 1 մարդ պատասխանել է՝ Արցախը կտան Ադրբեջանին։

Եվ մեր հարցաթերթիկի վերջին՝ 27-րդ հարցին՝ **«Ինչպես կգնահատեիք ՀՀ իշխանությունների աշխատանքը տեղահանվածներին աջակցելու հարցում»**, տրվել են հետեւյալ պատասխանները.

- 4 հոգի - լավ։
- 18 հոգի - վատ։

«ՀՀ կառավարությունը մանր-մունր խնդիրներ լուծում է,
բայց պետական քաղաքականություն, հստակ ռազմավարություն չկա։
Պոստ ֆակտում՝ աշխատում են։ Պետական ինստիտուտներ չունենք։ Օրը մի բան են ասում»։
«Արցախցին այստեղ իրավագուրկ, գոյությունը քարշ տվող մարդ է,
մարդու ազատության խնդիր չի կարողանում լուծել, աշխատել ու արժանապատիվ ապրել…
Գոնե համայնք ստեղծեին, որ Հադրութի նախկին բնակիչները միասին ապրեին այդ համայնքում։
Բոլոր հարցերը իշխանությունները աղալում են, փախստականի կարգավիճակ չեն տալիս»։

- 8 հոգի- դժվարանում եմ պատասխանել։

«Խնդիրները շատ են։ Կարծում եմ՝ Հայաստանն ավելին չի էլ կարող անել»։
Դժվարանում եմ պատասխանել, քանի որ շատ խորը ենթատեքստ ունի։
Արցախն ինքն իրենով ոչինչ չի կարող անել… հիմա միայն 40,000 են տալիս,
որն ասում են մինչեւ 2024 թվականն է լինելու»։

2023թ. փետրվար-մարտ ամիսներին ՄՀԻ Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ Հայաստանի առկա բնակչության շրջանում իրականացված Հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքների հետ համեմատելիս տեսնում ենք, որ **«Որքանո՞վ եք բավարարված ՀՀ կառավարության աշխատանքով»** հարցին պատասխաններն այսպիսին են.

- 8 % - լիովին բավարարված եմ
- 26 % - ավելի շուտ բավարարված եմ
- 26 % - ավելի շուտ բավարարված չեմ
- 38 % - ընդհանրապես բավարարված չեմ։

Մյուսները դժվարացել կամ/հրաժարվել են պատասխանել այս հարցին։

Ինչպես վերը նշեցինք՝ Երեւանի մամուլի ակումբի անցկացրած հետազոտության շրջանակներում հարցմանը մասնակցած արցախցիների 54 % -ը **տեղահանվածներին**

աջակցելու հարցում ՀՀ իշխանությունների աշխատանքը գնահատել է «վատ», 34 %-ը դժվարացել է պատասխանել հարցին եւ միայն 24 %-ն է «լավ» գնահատական տվել։

Ակնհայտ է, որ Հայաստանի բնակիչների կարծիքը ՀՀ կառավարության աշխատանքի վերաբերյալ այնքան էլ չի տարբերվում տեղահանված արցախցիների կարծիքից։

«ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեւանի մանուլի ակումբը «Մեդիայի եւ քաղհասարակության դերը հայաստանյան նոր բնակիչների ինտեգրման հարցում» ծրագրի շրջանակում իրականացրել է նաեւ **լրատվամիջոցների մշտադիտարկում, որը** նպատակ է հետապնդել պարզելու, թե հայաստանյան առցանց մեդիայի ազդեցիկ ներկայացուցիչները որքանով են անդրադառանում նոր բնակիչների խնդիրներին, նրանց վերաբերող եւ/կամ նրանց կողմից բարձրացված հարցերին ու կառավարության, մասնավոր ու օտարերկրյա /միջազգային կառույցների՝ նրանց հասցեագրված նախաձեռնություններին։

Նախապես առանձնացվել են հայաստանյան ութ առցանց լրատվամիջոցներ, որոնք, Երեւանի մամուլի ակումբի գնահատմամբ, ներկայացնում են հայաստանյան տեղեկատվական դաշտի հիմնական թեմաները։

1. «Առաջին լրատվական» [https://www.1in.am]
2. «Առավոտ» [https://www.aravot.am]
3. «Արմենպրես» [https://armenpress.am]
4. «Ժողովուրդ» [https://armlur.am]
5. «Հայկական ժամանակ» [https://www.armtimes.com]
6. «Հետք» [https://hetq.am]
7. «Հրապարակ» [https://hraparak.am]
8. «Голос Армении» [https://golosarmenii.am]

Ուսումնասիրության առարկան առցանց նյութն է եղել, որը հրապարակվել է նշված լրատվամիջոցների կայքէջերում 2022թ. հոկտեմբերի 1-ից 2023թ. փետրվարի 28-ը՝ հինգ ամիս։

Մշտադիտարկման ընթացքում առանձնացվել են վերոհիշյալ ութ լրատվամիջոցներում եղած հրապարակումները, որոնք վերաբերել են հայաստանյան նոր բնակիչների

- *քաղաքական (ներքին, արտաքին),*
- *սոցիալ-տնտեսական,*
- *իրավական,*
- *մշակութային խնդիրներին,*

ինչպես նաեւ այդ չորս ուղղություններով Հայաստանի կառավարության, մասնավոր ու օտարերկրյա/միջազգային կառույցների նախաձեռնություններին։

Մշտադիտարկման արդյունքում ի հայտ է բերվել 54 հրապարակում, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ 42-ը կամ ընդհանուրի 77.8%-ը վերաբերում են հայաստանյան նոր բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրներին եւ Հայաստանի կառավարության իրականացրած աջակցության ծրագրերին (օրինակ, տեղահանված արցախցիների համար բնակարաններ գնելուն, ֆինանսական աջակցության տարատեսակ ծրագրերին եւ այլն)։ Երկրորդ հորիզոնականում իրավական հարցերին առնչվող հրապարակումներն են՝ 6 անդրադարձ կամ ընդհանուրի 11.1%-ը։ Քաղաքական թեմաներին վերաբերող հրապարակումների քանակը երրորդն է՝ 4 հրապարակում կամ ընդհանուրի 7.4%-ը։ Ցանկը եզրափակում են մշակութային անդրադարձները՝ 2 հրապարակում կամ ընդհանուրի 3.7%-ը։

Սույն ծրագրի շրջանակներում իրականացված հայաստանյան ԶԼՄ-ների մշտադիտարկումը եւ տեղահանված արցախցիների շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ **հայաստանյան լրատվամիջոցներն առավելապես անդրադառնում են նոր բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրներին։** Դա, թերեւս, բնական է, քանի որ 2020թ. պատերազմից հետո Արցախից տեղահանվածներից գրեթե բոլորն ունեն տան ու սոցիալական բազմաթիվ այլ խնդիրներ, շատերը տակավին աշխատանք են փնտրում։ Նման իրավիճակում թե՛ արցախցիների, թե՛ հանրության այս հատվածին վերաբերող կառավարության, մասնավոր ու օտարերկրյա/ միջազգային կառույցների օրակարգի մի զգալի մասը պետք է, բնականաբար, կենտրոնացած լինի այդ ուղղությամբ, եւ դա իր արտացոլումն է գտնում հայաստանյան լրատվամիջոցների լուսաբանման մեջ։ Այս ուղղությանը վերաբերող նյութերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

- հակիրճ նորություններ պետական աջակցության որեւէ ծրագրի մասին,
- արցախցի տեղահանվածների բողոքի (սոցիալ-տնտեսական հարցերով) ակցիաների լուսաբանում
- եւ մարդկային պատմություններ, որոնց կարեւոր շեշտադրումներից է «հերոս(ներ)ի» ծանր սոցիալական դրության նկարագրությունը։

Սակայն մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանում բնակություն հաստատած արցախցիներին պակաս չեն հետաքրքրում քաղաքական հարցերը՝ խաղաղության եւ պատերազմի հարցը, Արցախի հիմնախնդրի ապագան, ինքնորոշման իրավունքի իրացման հարցը։

Այս տեսանկյունից ակնհայտ է, որ հայաստանյան նոր բնակիչների բարձրացրած, նրանց առնչվող քաղաքական հարցերին հազվադեպ անդրադառնալը (ընդհանուր լուսաբանման 7.4%-ը) չի արտացոլում արցախցիների կարիքները։

Հաջորդ դիտարկումը՝ հայաստանյան նոր բնակիչների մի զգալի հատված տակավին շարունակում է բախվել իրավական տարաբնույթ խնդիրների՝ սկսած Արցախում կառուցած, սակայն այլեւս ադրբեջանական վերահսկողության ներքո գտնվող տան համար վարկային պարտավորության շուրջ բանկի հետ դատական քաշքշուկներից,

մինչեւ Հայաստանում աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր հայթայթելը: Նման իրավիճակը շատ արցախցիների մեջ առաջացրել է զգացողություն, թե անհրաժեշտության դեպքում չեն կարողանա պաշտպանել անգամ իրենց հիմնարար իրավունքները:

Հայաստանի նոր բնակիչների իրավական հարցերի լուսաբանումը նույնպես խիստ սահմանափակ է (ընդհանուրի 11.1%-ը), ինչը հանրության ուշադրությունից մի զգալի մասով դուրս է թողնում արցախցիների առջեւ ծառացած նմանատիպ խնդիրները, իսկ նոր բնակիչներին զրկում է գոյություն ունեցող հնարավորությունների մասին պատշաճ կերպով տեղեկանալուց: Իրավական հարցերին վերաբերող գրեթե բոլոր հրապարակումները մարդկային պատմություններ են, որոնց «հերոս(ներ)ը» բախվել են ինչ-ինչ խնդիրների՝ պատերազմի ու գաղթի հետեւանքով Արցախում կորսված փաստաթղթերի կամ այնտեղ մնացած սեփականության՝ ոչ պատշաճ փաստաթղթավորված լինելու պատճառով:

Եվ վերջապես, **լուսաբանման շարունակականությունը**: Անգամ հնգամսյա մշտադիտարկումը ցույց տվեց, որ **լրատվամիջոցներն արցախցիներին գերազանցապես անդրադառնում են որեւէ առիթի պարագայում**՝ 44-օրյա պատերազմի հերթական տարելից, կառավարության կողմից աջակցության նոր ծրագրի մեկնարկ/գործողի թարմացում, արցախցիների բողոքի ակցիաներ եւ այլն: Եթե մի կողմ թողնենք Արցախից տեղահանվածներին անդրադառնալու նման առիթները, ապա նոր բնակիչների վերաբերյալ հայաստանյան լրատվամիջոցների հրապարակումների առանց այդ էլ բավականին սուղ քանակը գրեթե կիսով չափ կկրճատվի: Ակնհայտ է, որ այդօրինակ «ընդմիջումներով» լուսաբանումն ամենեւին չի նպաստում նոր բնակիչներին հուզող հարցերը հանրային օրակարգում պահելուն: Մեր կողքին ապրող արցախցիների ձայնը պետք է առավել լսելի լինի: Մարդկանց խնդիրները ժամանակ առ ժամանակ լուծվում են կամ ավելի են բարդանում, սակայն հիմնահարցերը, իրավունքներն ու շահերը շարունակական են: **Հայաստանյան մամուլը պարտավոր է արցախից տեղահանվածների խնդիրներն իր ամենօրյա ուշադրության տակ պահելով նպաստել դրանց լուծմանը:**

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ

2020 թվականի 44-օրյա պատերազմից ի վեր իրականացվել են հետեւյալ ծրագրերը՝ ուղղված տեղահանված ընտանիքների ինտեգրմանն ու բնականոն կյանքի ապահովմանը։

1. «Մարդասիրական օգնություն եւ սոցիալ-հոգեբանական օգնություն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած խոցելի բնակչությանը» ծրագիր։
2. «Որակյալ կրթություն գյուղաբնակ կանանց համար» ծրագիրը։
3. «Հակամարտությունից տուժած տղաների եւ աղջիկների հիմնական կրթական կարիքների բավարարում Հայաստանում» ծրագիրը։
4. «Տեղահանված եւ տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական եւ սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում (EPIC)» ծրագիրը։

Իրականացրած ծրագրերի շրջանակներում տեղահանված անձանց, մասնավորապես կանանց համար կազմակերպվել են իրազեկման եւ կարողությունների զարգացման դասընթացներ։ Յուրաքանչյուր դասընթացի համար մշակվել է կրթական ծրագիր եւ հարմարեցվել է մասնակից կանանց կրթական կարիքներին։

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն Գեղարքունիքի մարզի Սեւանի, Գավառի, Մարտունու եւ Վարդենիսի տարածաշրջանների քաղաքային եւ գյուղական համայնքներում բնակվող արցախցի ընտանիքիներին տրամադրել է հիգիենիկ պարագաների, հագուստի եւ նորածինների համար նախատեսված փաթեթներ, պայուսակներ եւ գրենական պիտույքներ։

Փորձագետների ներգրավմամբ կազմակերպվել են հանդիպումներ՝ ուղղված կանանց աշխատունակության բարելավմանը։ Տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն։

ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացների արդյունքում արցախցի կանայք ձեռք են բերել նոր մասնագիտություններ (մատնահարդարում, վարսահարդարում, խոհարարություն, դիմահարդարում, կար ու ձեւ եւ այլն) կարողություններ ու հմտություններ, որի արդյունքում կարողացել են ապահովել իրենց զբաղվածությունը։

Նմանատիպ ծրագրերի իրականացումը կանանց օգնում է արագ ինտեգրվել եւ աշխատանք գտնել։

Առկա խնդիրներ՝

- ✓ Մշտական բնակության վայր չունենալու խնդիր։
- ✓ Որեւէ նախաձեռնություն իրականացնելու մոտիվացիայի պակաս։
- ✓ Աշխատանք/զբաղվածություն չունենալու խնդիր։
- ✓ Երեխաների համար զարգացմա կենտրոնների բացակայության խնդիր։

«ԱՐՄԱՎԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

2020թ. դեկտեմբերից մինչեւ 2021 հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում ԱԶԿ ՀԿ-ն Արցախից տեղահանված եւ Արմավիրի մարզում բնակվող ընտանիքներին ցուցաբերել է աջակցություն հետեւյալ չափով եւ տեսակով.

- Երեխաների սոցիալ-հոգեբանական աջակցություն - 764 երեխա, որից 415 տղա, 349 աղջիկ։
- Դրական ծնողավարության սեմինարներ -229 ծնող, որից 216 կին, 13 տղամարդ;
- Դպրոցական պարագաների բաշխում-183 երեխա, որից 79 տղա, 104 աղջիկ։
- Պլանշետների բաշխում-100 երեխա որից 59 տղա, 41 աղջիկ։
- Մանկական նոր հագուստ - 390 երեխա, որից 180 տղա, 210 աղջիկ։
- Հիգիենիկ ընտանեկան փաթեթներ-125 փաթեթ, որից օգտվել են՝ 225 երեխա, 126 մեծահասակ։
- Անկողնային պարագաներ-150 փաթեթ։
- Համակարգչային դասընթացների են մասնակցել 22 երեխա, որից 12 տղա, 10 աղջիկ։
- Անգլերենի դասընթացների են մասնակցել 20 երեխա, որից 9 տղա,11 աղջիկ։
- Հանրային 5 ապաստարանների 4 ամսվա կոմունալ վարձերն են փոխանցվել, որի արդյունքում օգտվել է 202 տեղահանված անձ։

Ընդամենը՝ 1286 շահառու, որից 995 երեխա, 291 մեծահասակ :

Ծրագիրն իրականացվել է «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Կազմել Արցախից տեղահանված ընտանիքների/անհատների **սոցիալական անձնագրեր**, որոնց վարման գործը կազմակերպել միասնական տեղեկատվական հարթակների միջոցով՝ բացառելու համար օգնությունների բաշխման կրկնակումները:
- Սոցիալական անձնագրերի վարման գործը ըստ հնարավորությունների պատվիրակել ոչ միայն ՏԻՄ-երին, այլ նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին եւ քաղաքացիական-կամավորական նախաձեռնություններին՝ նրանց համար կազմակերպել թեմատիկ կարճատեւ վերապատրաստումներ (օրինակ՝ Սոցիալական աշխատողների ասոցիացիայի միջոցով):
- Պատրաստել եւ ՏԻՄ-երի միջոցով բաժանել տեղահանված անձանց **աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկներ**, որոնք պարբերաբար կթարմացվեն:
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին վերապահել պետական ծրագրերի նկատմամբ հանրային վերահսկողությունը:
- Աջակցության ծրագրերը նախաձեռնելուց առաջ շահառուների շրջանում հանրային քննարկումներ անցկացնել:
- Պարբերաբար դիտարկել արդեն իսկ գործող ծրագրերի արդյունավետությունը՝ անհրաժեշտ շտկումներ կատարելու եւ ճշգրտված ժամանակացույցներ կազմելու համար:
- Լրջորեն աշխատել ԶԼՄ-ների հետ՝ նոր բնակավայրերում արցախցիների ինտեգրմանը նպաստող տեղեկատվական բովանդակության ստեղծման համար:
- Սոցիալ-տնտեսական աջակցությունը զուգակցել աշխատանի տեղավորմանն ուղղված ծրագրերով, մասնագիտական վերապատրաստումներով:
- Տեղահանվածների հետ աշխատող պաշտոնյաների համար կազմակերպել պաշտոնեական էթիկայի դասընթացներ:
- Հավատարիմ լինել սոցիալական արդարության սկզբունքներին:
- Կյանքի կոչել տեղահանվածներին փախստականի իրավական կարգավիճակ տալու ծրագիրը:
- Արցախցի կանանց համար կազմակերպել բիզնեսի պլանավորման եւ կառավարման դասընթացներ եւ ստեղծել հնարավորություններ ու պայմաններ բիզնեսի իրականացման համար:
- Ստեղծել զբաղվածության/ժամանցի կենտրոններ, որոնք իրենց մեջ կներառեն անվճար խմբակներ երեխաների համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՀԿ-ՆԵՐԻՆ

- Ստեղծել Արցախում գործող եւ տեղահանված արցախցիների քաղհասարակության կազմակերպությունների եւ հայաստանյան ՔՀԿ-ների համագործակցության գործուն հարթակ։
- Պարբերաբար կատարել տեղահանվածների կարիքների գնահատում, արդյունքները ներկայացնել կառավարության համապատասխան կառույցներին եւ ՏԻՄ-երին։
- Իրականացնել արցախահայության եւ տեղահանված արցախցիների աջակցության պետական ծրագրերի մոնիտորինգ։
- Հայաստանյան քաղհասարկության բոլոր կազմակերպություններին, հինադրամներին, կոչ անել իրենց գործող եւ հեռանկարային ծրագրերում ամրագրել արցախահայության մասնակցայնությունը խթանող մոտեցումներ։
- Սերտորեն աշխատել Արցախի խնդիրների շուրջ ձեւավորված քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվիստների հետ, գտնել փոխգործակցության եւ միասնական ներուժի հզորացման հնարավորություններ։
- Հատկապես մեծ ուշադրություն դարձնել տեղահանված ընտանիքների՝ իրենց բնակության նոր վայրերում ինտեգրման խնդիրներին։
- Արցախից տեղահանվածների թիրախային տարբեր խմբերին ներգրավել կարողությունների զարգացման, մասնագիտական վերապատրաստումների եւ խորհրդատվական ծառայությունների մատուցման ծրագրերում։
- Տեղահանված արցախցիներին ներգրավել մշակութային, կրթական, առողջապահական եւ հանրային կյանքի այլ ոլորտներում կարողությունների զարգացման ծրագրերում։
- Տեղահանված կանանց եւ երեխաների ինտեգրմանն ու իրավունքների պաշտպանությանն ուղղված թիրախային ծրագրեր իրականացնել։
- Սերտորեն աշխատել ԶԼՄ-ների հետ։ Նպաստել, որ տեղահանվածների խնդիրները բազմակողմանի եւ որակյալ լուսաբանումներ ունենան։
- Ուշադիր լինել, տեղեկանալ, թե արդյոք ԶԼՄ-ների հրապարակումներից հետո իրավիճակը փոխվել է։
- Նախաձեռնել լրագրողական մասնագիտական կազմակերպությունների հետ վերոհիշյալ խնդիրների բարելավմանն ուղղված քննարկումներ։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻՆ

- Տեղահանվածների խնդիրները լուսաբանելիս խստորեն հետեւել լրագրողական էթիկայի կանոններին՝ հաշվի առնելով տեղահանվածների խոցելիությունն ու դժվար կացությունը։
- Չբավարարվել միայն իրադարձային լրատվությամբ՝ ցույցերի, միտինգների կամ արտակարգ իրավիճակների լուսաբանմամբ։
- Խուսափել «դժվար» թեմաները լղոզված, պարզունակ կամ կիսատ-պռատ ներկայացնելուց։
- Արցախից տեղահանվածների մասին գրելիս միշտ հիշել, որ հայրենազրկման, ազատ եւ ինքնիշխան կարգավիճակ ունենալու եւ անվտանգության հիմնահարցերը նրանց համար կարեւոր եւ առաջնային են։
- Չսահմանափակվել միայն տեղահանվածների սոցիալ-տնտեսական թեմաները վերհանելով։ Սույն ծրագրի շրջանակում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ տեղահանված արցախցիների 99 տոկոսը դժգոհ է հայաստանյան լրատվամիջոցներում իրենց խնդիրների լուսաբանումից, շեշտելով, որ քաղաքական եւ իրավական հարցերը ստորադասված են, ԶԼՄ-ներն անդրադառնում են միայն տեղահանվածների կեցության, սննդի ու կենսական տարրական պայմաններ ունենալու խնդիրներին։
- Աջակցության ծրագրերի արդյունավետությունը դիտարկել եւ լուսաբանել դրանց հասցեականության եւ իրագործելիության տեսանկյունից։
- Տեղահանվածներին ցուցաբերվող աջակցության մասին գրելիս միշտ զգույշ լինել. խղճահարության փոխարեն մարդիկ հասկացված լինելու, ապրումակցման եւ արժանապատիվ կարեկցանքի կարիք ունեն։
- Տեղահանված արցախցիներին վերաբերող իրավական հարցերը լուսաբանելիս սերտորեն համագործակցել իրավապաշտպան կազմակերպությունների, մարդու իրավունքներով զբաղվող ՔՀԿ-ների հետ։
- Սերտորեն աշխատել Արցախում եւ Հայաստանում գործող արցախյան հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական ակտիվիստների հետ. հաճախ նրանք ավելի տեղեկացված են լինում, քան որոշ պաշտոնյաներ ու պետական կառույցների ներկայացուցիչներ։
- Լրջորեն աշխատել ՏԻՄ-երի հետ՝ նոր բնակավայրերում արցախցիների ինտեգրմանը նպաստող տեղեկատվական բովանդակության ստեղծման համար։
- Հետեւողական լինել հրապարակումներից հետո տիրող իրավիճակի լուսաբանման հարցում, տեղեկանալ՝ արդյո՞ք ինչ-որ բան փոխվել է։
- Ակտիվ լինել արցախից տեղահանվածների մշակութային կյանքի լուսաբանման հարցում։ Մշակութային նախաձեռնություններն ինտեգրման լավագույն միջոցներից են, եւ դրանց լուսաբանումը հոգեկան բավարարվածության եւ լավատեսության ազդակներ կարող են դառնալ։